24299

Պրոլետարներ բոլոր յերկրների միացեք՝

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՍԱՐԱԿ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆ

ИНСТИТУТ
СССР

ԱԶՈՎ ՍԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 1934

331.87
Ս-78

35-4
С 781
331.87
Ս-78
15 JAN 2010

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք

# ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՍՑՆԵԼ ԲԱՐՁՐ ԱՍՏԻՃԱՆԻ

Փոխադրեց Վ. ԱՎԱԴՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ
ՑԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ 1934

05.08.2013
24299

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ազով-Սևծովյան յերկրամասի բոլոր կոլխոզնիկներին ուղղված Կրիմսկայա ՄՏ կայանի բրիգադիրների նամակի մասին (ՀԿԿ(բ) Ազով-Սևծովյան Յերկրկոմի վորոշումը) . . . . . 3

Կոլխոզային շարժման ուշագրավ փաստաթղթեր («Մոլոտ»-ի 5 հոկտեմբերի 1934 թվի առաջնորդողը) . . . . . 7

Պայքարեցեք Ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար (Կրիմսկայա ՄՏԿ բրիգադիրների նամակը՝ Ազով-Սևծովյան յերկրամասի բոլոր կոլխոզնիկներին) . 14

Մրցմամբ ընդգրկել կոլխոզային տնտեսության բոլոր ճյուղերը, (Վերին-Դոնյան ռայոնի, Կազանսկայա ՄՏ կայանի «Կրասնիյ Ոգտյաբր» կոլխոզի կոլխոզնիկների նամակը) . . . . . 23

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ
им. А. Месропяна
56792-66

# ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՄԱՍԻ ԲՈԼՈՐ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԿՐԻՄՍԿԱՅԱ ՄՏ ԿԱՅԱՆԻ ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԻ ՄԱՍԻՆ*)

1. Հավանություն տալ «Մոլոտում» հրապարակված Կրիմսկայա ՄՏ կայանի բրիգադիրների և Վերին-Դոնյան ռայոնի «Կրասնիյ Ոկտյաբր» կոլխոզի կոլխոզնիկների նամակներին և առաջարկություններին։

2. Պարտավորացնել բոլոր կուսկազմակերպություններին և քաղբաժիններին ծավալել մրցողների շարքերը լայնացնելու և ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար մղվող պայքարի մեջ բոլոր կոլխոզային բրիգադներին ներգրավելու աշխատանքը։

*) ՀԿԿ(բ) Ազով-Սևծովյան Յերկրկոմի վորոշումը («Մոլոտ» 5 հոկտեմբերի 1934 թ.)

3. Ընթացիկ տարվա բոլոր գյուղատնտեսական աշխատանքները հաջողությամբ ավարտելու, հացահանձնման պլանները անմիջապես և լրիվ կատարելու համար ակտիվորեն պայքարելուն զուգընթաց — մրցության կենտրոնական խմդիրը պետք է լինի խնամքով նախապատրաստել բոլոր պայմանները՝ 1935 թվին կոլխոզների աշխատանքի վարակը բարձրացնելու համար (բոլոր ուղղությամբ — բերքատվություն, մեքենագործում, անասունների թվի աճում և այլն)։

4. Ընդունել Կրիմսկայա ՄՏ կայանի բրիգադիրների առաջարկությունը՝ 1934 թվի հունվարի 7-ին դաշտաբուծական, տրակտորային, անասնաբուծական և ստալինյան կոչին մասնակցող ուրիշ բրիգադների բրիգադիրների լայն հավաք հրավիրելու մասին։

5. Պարտավորացնել ռայկոմներին և քաղբաժիններին, բոլոր բրիգադներին, բոլոր կոլխոզնիկներին մրցման մեջ ներգրավելուն զուգընթաց, ամրացնել այժմյան լավագույն առաջատար բրիգադները («250»-ի և «150»-ի թվից), վորպես ՄՏ կայանի փորձնական հենարաններ, վորոնք կուտակում են ագրոտեխնիկայի նոր ձևերի կիրառման, նոր մշակույթների մուծման, նոր մեքենաների ոգտագործման փորձ և այլն։

Հունվարին՝ մի ամսվա դասընթացքների համար մրցման մասնակցող «250» բրիգադիրներից հավաքել 100 լավագույն բրիգադիրներ՝ նրանց կուտակած վողջ փորձն ընդհանրացնելու, կոլխոզային ղեկավար աշխատանքի համար նրանց առաջ քաշելու գործը նախապատրաստելու և Ազով-Սևծովյան յերկրամասի կոլխոզների փորձնական աշխատանքի կոնկրետ պլանը մշակելու համար։ Դասընթացքների կազմակերպելու պարտականությունը դնել Յերկրհողվարչության և եկոնոմիկայի ու սոցիալիստական հողագործության կազմակերպման ինստիտուտի վրա։ Պարտավորացնել Յերկրհողվարչությանը ապահովել այս դասընթացքների աշխատանքի ամենավորակյալ ղեկավարությունը։

Դասընթացքների աշխատանքի ընթացքում նախապատրաստել մի շարք այնպիսի նոր գրքույկներ, վորոնք ընդհանրացնեն մեր յերկրամասի լավագույն կոլխոզների և բրիգադների աշխատանքի փորձը։

6. Անհրաժեշտ համարել հրատարակելու այնպիսի գրքեր, վորոնք ընդհանրացնեն գյուղատնտեսական բարդ մեքենաների (տրակ-

տոր, կոմբայն, պիկեր, ավտոմոբիլ և այլն) ոգտագործման ասպարիզում յեղած պայքարը և առաջին հաջողությունները մեր յերկրամասի դաշտերում, և վորոնք ցույց տան մեքենաների յուրացման լավագույն հերոսներին։

Այս գրքերի խմբագրությունը հաստատել հետևյալ կազմով. ընկ. ընկ. Ֆիլով, Յակովլև և Միխալևիչ («Մոլոտ»), Յերոֆեյցկի (կոմսոմոլի կազմբյուրո) և Բերեզին։

Գրքերի հրատարակությունը հանձնարարել Ազով-Սևծովյան հրատարակչությանը, պարտավորացնելով նրան ապահովել գրքերի բարձր վորակը։

---



---

## ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ*)

Յերեկ «Մոլոտում» հրապարակված Կրիմսկայա ՄՏ կայանի և Վերին-Դոնյան ռայոնի Կազանսկայա ՄՏ կայանի «Կրասնիյ Ոկտյաբր» արտելի կոլխոզնիկների նամակներն անկասկած հանդիսանում են կոլխոզային շարժման ուշագրավ փաստաթղթեր։

Կուսակցության 17-րդ համագումարում, գնահատելով կուսակցության կատարած աշխատանքը՝ մանր, կորտված գյուղացիական տնտեսությունները կոլխոզներում միացնելու գործում, ընկ. Ստալինն ասել է. «Ըստ էության հաշվետու ժամանակաշրջանը գյուղատնտեսության համար յեղել է վոչ այնքան արագ վերելքի և հուժկու առաջընթացի ժամանակաշրջան, վորքան մոտա-

*) «Մոլոտ» 5 հոկտեմբերի 1934 թ.

լուտ ապագայում այդպիսի վերելք և այդ-
պիսի առաջընթաց ունենալու համար նա-
խադրյալներ ստեղծելու ժամանակաշրջան»։

Հրապարակված նամակներն ուշագրավ
են նրանով, որ նրանք ցույց են տալիս,
թե ինչպես մեր կոլխոզնիկների հոծ բազ-
մության մեջ հասունանում է կոլեկտիվ
տնտեսության «այս հուժկու առաջընթացի»
բոլոր հնարավորությունների պարզ հասկա-
ցողությունը, թե ինչպես կոլխոզնիկների էլ
ավելի լայն ՄԱՍՍԱՆԵՐ են ներգրավվում
այս հնարավորությունների լիակատար
իրացման համար մղվող պայքարում։ Այս-
տեղից էլ սոցմրցման առաջ նոր պահանջ-
ներ են դրվում։ Կրիմսկու և Կազանսկու
կոլխոզնիկներն ուզում են այնպես մրցել,
որպեսզի էլ ավելի արագ լինի կոլխոզային
վերելքը, էլ ավելի հզոր լինի առաջընթացը։

Լայնացնել սոցողների շարքերը — այս
գաղափարը կարմիր թելի պես անցնում է
յերկու նամակների միջոցով։ Մրցել ստա-
լինյան մեթոդով — դա նշանակում է անդա-
դար առաջ մղել հետ մնացողներին և հաս-
ցնել առաջավորների մակարդակին։ Յեվ յե-
թե մի տարի առաջ Կրիմսկայա ՄՏ կայա-
նում միայն բրիգադիր Կուրգասն եր կարո-



ղանում հպարտանալ 20 ցենտներ բերքով,
ապա այս տարի ստալինյան կոչի 12 բրի-
գադները ձեռք են բերել 20-ից ավելի ցենտ-
ներ ցորենի բերք։ Յեվ Կրիմսկու բրիգադիր-
ներն իրենց առաջ խնդիր են դրել, որպեսզի
1935 թվին անխաթար բոլոր բրիգադներում
մի հեկտար ցորենի բերքը 20 ցենտներից
պակաս չլինի։ Նշանակում է բոլոր բրիգադ-
ները պետք է ակտիվորեն պայքարեն Ստա-
լինյան բրիգադ կոչվելու իրավունքը ձեռք
բերելու համար։

Սոցմրցմամբ ընդգրկել կոլեկտիվ տնտե-
սության բոլոր ճյուղերը—ահա յերկու նա-
մակների յերկրորդ եական պահանջը։
«Կրասնիյ Ոկտյաբր» արտելի կոլխոզնիկ-
ներն իրենց աշխատանքի կենդանի որինակ-
ներով ցույց են տվել, թե ինչպես կարելի
յե ոգտագործել բոլոր բնական հարստու-
թյունները—և՛ դաշտը, և՛ դոնյան տափաս-
տանի խոտերը, և՛ լճերը, և՛ ավազանները,
և՛ անասնաբուծական ֆերմաները, և՛ իրենց
կոլխոզային գործարանները, և՛ արհեստա-
նոցները—պետության բարորության, կոլ-
խոզների և կոլխոզնիկների բարորության
համար։ Միայն հարկավոր է, որպեսզի բո-
լոր ճյուղերում լեռա սոցմրցումը, համառ

պայքար տարվի մանր սեփականատիրական ֆետացորդների դեմ և աշխատանքին ազնիվ վերաբերմունք ցույց տալու համար։

Վերջապես, յերկու նամակների համար էլ բնորոշն այն է, որ նրանք բացառիկ սրությամբ և խստությամբ մերկացման կենտրոնում դնում են աշխատանքի վարակի հարցերը, գյուղատնտեսական յուրաքանչյուր կամպանիան ժամանակին նախապատրաստելու հարցերը, պահանջելով «այս տարվա բերքահավաքի բոլոր աշխատանքների ազնիվ յեվ բարեխիղճ ավարտումը, հացահանձնման շուտափույթ ավարտումն այն կոլխոզներում, վորտեղ նա չի ավարտված»։ Թե Կրիմսկու բրիգադիրները, և թե Կազանսկու կոլխոզնիկներն ամբողջ հասակով խնդիր դրին՝ բոլոր ասպարեզներում որինակելի կերպով նախապատրաստվել 1935 թվին։

Հրապարակված նամակները և կուսակցության Յերկրային կոմիտեյի վորոշումը կոչնեն բոլոր կուսկազմակերպություններին՝ նոր աստիճանի վրա բարձրացնելու մրցումը մեր կոլխոզներում։ Մինթե մեր մրցության գլխավոր թերությունը մինչև այժմ չի հանդիսանում այն, որ մեր յերկրամասում քիչ չեն ռայոններ և ՄՏ կայաններ, վորտեղ առաջավոր բրիգադները մրցում են «բոլոր ուժով», իսկ տասնյակ հարևաններ միայն նայում են նրանց վրա, առանց մրցությանը մասնակցելու։ Մինթե ներկայումս յուրաքանչյուրը չի տեսնում, որ մինչև այժմ մրցությունը չափազանց դանդաղությամբ է տարածվում դաշտավարությունից կոլեկտիվ տնտեսության ուրիշ ճյուղերի վրա։ Մինթե փորձը ցույց չի տալիս, որ ամենուրեք մրցությունն անց է կացվում հարևանցիորեն և իր սուր ծայրով չի ուղղված դեպի աշխատանքների բարձր վարակը, դեպի գյուղատնտեսական կամպանիաների ժամանակին նախապատրաստումը։

Պետք վերջ տալ սոցմրցման ասպարեզում յեղած այս թերություններին։ Յեվ մենք առանձնապես ուզում ենք ընդգծել կուսկազմակերպությունների, քաղբաժինների մեծագույն պատասխանատվությունը՝ մրցությունը բարձր աստիճանի հասցնելու համար։ Գործը միայն նրանում չէ, որ պետք դեկլարատիվ հայտարարություններով արձագանքել հրապարակված նամակներին։ Վոչ, հարկավոր է Կրիմսկու բրիգադիրների և Կազանսկու կոլխոզնիկների նամակները

վերցնել, նամակներ, որոնք կոչ են անում ստալինյան մեթոդով ավարտել գյուղատնտեսական տարին, դիմավորել Հոկտեմբերյան տարեդարձին, խորհուրդների համագումարին և ստալինյան մեթոդով պատրաստվել 1935 թվին—և այս կոչով գնալ այնտեղ, ուր բրիգադները աշնանավար են կատարում, որտեղ հավաքում են արեվածաղիկը, որտեղ քաղում և ելեվատոր են փոխադրում յեգիպտացորենը, որտեղ վերջացնում են ցանքը, որտեղ կեր են մթերում ձմեռվա համար, որտեղ տրակտորներ են վերանորոգում գարնան համար, որտեղ պատրաստում են նոր կոլխոզային կադրեր։ Այստեղ, մրցման մեջ դեռ չներգրավված կոլխոզնիկների մասսայում պետք է արթնացնել ավելի լավ աշխատելու, առաջավորներին հասնելու բուռն ցանկություն։

Պետք է դինվել Յերկրկոմի այսոր հրապարակված որոշումով և կատարել այն բոլշևիկորեն։

Ստալինը հանճարեղ պարզությամբ բնորոշեց սոցմրցումը, որպես «մասսաների գործնական հեղափոխական ինքնաքննադատության» արտահայտություն։ Մրցման նոր վերելքն այնպես պետք է կազմակերպել, որ



ել ավելի խոշոր չափով համախմբվեն բոլոր ազնիվ կոլխոզնիկները՝ պայքարելու կոլխոզներում դասակարգային թշնամիների, կուլակային ազդեցության, մանր սեփականատիրական ճնցորդների դեմ։ Հենց հացահանձնումը և ողջ գյուղատնտեսական տարին հաջողությամբ ավարտելու համար մղվող պայքարի ամենայեռուն շրջանումն է, որ կուլակության ճնցորդները, նրա գործակալներն առանձին համառությամբ փորձում են խանգարել և ջնասել մեզ։ Դրա համար ել ավելի խիստ պետք է լինի մեզ մոտ պետական և կուսակցական կարգապահությունը։ Դրա համար ավելի լայն և յեռանդուն պետք է լինի մեզ մոտ սոցմրցումը։

---

## ՊԱՅՔԱՐԵՑԵՔ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԲՐԻԳԱԴ ԿՈՂՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՐ*)

Շուտով լրանում է տարին, յերբ Վորոշիլովի անվան կոլխոզի բրիգադիր ընկ. Կուրգասը, մեր յերկրամասի 250 լավագույն կոլխոզային բրիգադիրների միջից ստորագրեց ընկ. Ստալինին ուղղված հայտնի նամակը։ Այս նամակում, է միջի այլոց, պատմվել է, վոր ընկ. Կուրգասը մի հեկտարից հավաքել է 20 ցենտներ աշնանացան ցորենի բերք։

Մեր ՄՏ կայանի և վողջ յերկրամասի բոլոր կոլխոզնիկներն առանձնապես մտաբերում են նամակի հետևյալ խոսքերը.

«Բոլոր կոլխոզային բրիգադների հետ միասին միևնույն հողում մենք հերկում, ցանում և հավաքում եյինք։ Մեր ձիերը և մեքենաները հարևանների ունեցածից ավելի չեյին և յեթե Կուրգասը Կրիմսկի ռայոնում, Ոկոլելովը Բելորեչենսկի, Բիչկալովը Կրասնոդարի, Մարինչենկոն Տարասովի, Մարտինովան Բլագոդարնենսկի ռայոնում — Դոնում, Կուբանում, Թերեքում, Ստավրոպոլում հավաքեցին 18 — 20 — 25 ցենտներ ցորեն, ապա նշանակում է, վոր այսքան բերք կարող են և պետք է հավաքեն վողջ յերկրամասը, մեր բոլոր կոլխոզները»։

«...Մենք բարձր բերք ստացանք նրա համար, վոր մենք մյուսներից ավելի լավ կատարեցինք կուսակցության ցուցմունքները, մենք մյուսներից ավելի շատ աշխատանք թափեցինք հողի վրա, յերբեք չխնայեցինք յենթակուլակին և դատարկապորտին և յուրաքանչյուր կոլխոզնիկին մրցման մեջ ներդրավեցինք»։

Բոլորը գիտեն, վոր ընկ. Ստալինին ուղղված լավագույն բրիգադիրների այս նամակին իբրև պատասխան՝ մեր յերկրամասում սկսվեց բարձր բերքատվության բրիգադների ստալինյան կոչ։ Հազարավոր բրիգադներ խոստացան իրենց աշխատանքում հասնել առաջավոր բրիգադներին։ Յեվ Կրիմսկու ՄՏկա-

*) Կրիմսկայա ՄՏԿ բրիգադիրների նամակը՝ ուղղված Ազով-Սեվծովյան յերկրամասի բոլոր կոլխոզնիկներին («Մոլոտ» 4 հոկտեմբերի 1934)։

յանի բրիգադիրների կողմից այդ նամակն ստորագրող 15 բրիգադիրները գլխավորում են այն բրիգադները, որոնք 17-րդ կուսհամագումարի բացումից առաջ ժամանակցեցին բարձր բերքատվության բրիգադների ստալինյան կոչին, տվին իրենց կոնկրետ պարտավորությունները — հասնել Կուրգասին։

Մենք այժմ կարող ենք ասել, որ ստալինյան կոչը ոչ թե խոսքերով, այլ փթերով տվեց հավաքված բերք։

Մեր 12 բրիգադներն այս տարի մի հեկտարից ունեն 20-ից ավելի ցենտներ ցորենի բերք։ Ահա մեր գլխավոր արդյունքը։ Իսկ Կուրգասը անցյալ տարվա թվից էլ անցավ։ Առանձին հողամասերում նա մի հեկտարից հավաքեց 36 ցենտներ, իսկ ընդհանրապես, նրա հողամասի մի հեկտարի միջին բերքը 26,8 ցենտներ է։ Վատ բերք չէ։ Բայց, ստալինյան կոչի շնորհիվ, Կուրգասին արդեն հասնում է «Կրասնայա Բատարեյա» կոլխոզի բրիգադիր Վադրանը, որը մի հեկտարից ձեռք է բերել 33 ցենտներ ցորենի բերք։ Վորոշիլովի անվան կոլխոզի Դիբրովի բրիգադում մի հեկտար ցորենի բերքը հասել է 32,8 ցենտների։



Այս թվերը ցույց են տալիս, որ չնայած յերաշտային գարնան, մեզ հաջողվեց ոչ միայն առատ բերք ստանալ, այլ նաև ժամանակին և համաչափ կատարված քաղհանով, արած բերքահավաքով, հացահանձնման նախաժամկետային ավարտումով խիստ բարձրացնել աշխորի յեկամուտը՝ անցյալ տարվա համեմատությամբ։

Այժմ յերկրամասում սկսվել է սոցմրցման ընթացքի մասսայական ստուգումը։ Մենք գիտենք, որ թե հացահանձնման և թե աշնանային աշխատանքների ասպարեզում մեր յերկրամասում դեռ կան հետամնաց կոլխոզներ։ Ցեվ այժմ մեր ջերմ ցանկությունն է — բարձրացնել սոցմրցման էլ ավելի մեծ ալիք, էլ ավելի ընդարձակել մրցողների շարքերը։

Մեզ մոտ, Կրիմսկայա ՄՏ կայանում, քննարկելով ստալինյան կոչի առաջին հանրագումարները, մենք կարճ, բայց հաստատ վորոշում հանեցինք։ Մենք մեր առաջ խնդիր դրինք, վորպեսզի 1935 թվին անխտիր բոլոր բրիգադներում ցորենի բերքը մի հեկտարից 20 ցենտներից պակաս չլինի։ Մենք մեր առաջ խնդիր դրինք, որ մեզ մոտ, առանց բացառության, բոլոր բրիգադները

ՊԵՏ ԿԱՆ ՖՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
43736-68

պայքարեն ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար։ Մենք հաստատ համոզված ենք, որ յեթե այժմ, աշնանից բոլոր կոլխոզնիկներին ընդգրկենք սոցմրցմամբ, ապա 1935 թվին մենք կիրագործենք ստալինյան լոզունգը — մեր ՄՏ կայանի բոլոր կոլխոզները կլինեն բոլշևիկյան, իսկ կոլխոզնիկներն — ունևոր։

Ահա թե ինչու մենք «Մոլոտի» միջոցով դիմում ենք հետևյալ առաջարկությամբ.

Ամբողջ յերկրամասում կազմակերպել ստալինյան կոչի բրիգադների պարտավորությունները լայնորեն ստուգելու գործը։ Ընդլայնել մրցողների շարքերը։ Ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար ծավալվող մրցությամբ ընդգրկել մեր յերկրամասի բոլոր բրիգադները։ Հասել է ժամանակը, յերբ այն բոլոր լավը, որ ունեցել և ունեն «250» լավագույն բրիգադները, սոցմրցման ասպարեզում նրանց կուտակած ամբողջ փորձը տրվի մեր բոլոր կոլխոզային բրիգադներին։

Մենք համարում ենք, որ վոչ միայն դաշտավարական յեվ տրակտորային բրիգադները, այլ յեվ բանջարաբուծական, անասնաբուծական, ծխախոտագործական, խաղողագործական յեվ մնացած բոլոր բրիգադները, ինչ նյութում ել որ նրանք աշխատելիս լինեն, հենց այժմ պետք է մասնակցեն ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար մղվող պայքարին։

Այն ժամանակ ել ավելի կբարգավաճի ունևոր կյանքը բոլշևիկյան կոլխոզներում։

Առանձնապես մեր ջերմ կոչն ուղղում ենք մեքենաներ կառավարողներին — տրակտորիստներին, մեքենավարներին, շոֆերներին, պիկերավարներին։ Մեքենան արդեն ամուր տեղ է գրավել կոլխոզնիկների ունևոր կյանքի համար մղվող պայքարի ավանգարդում։ Տրակտորային ջոկատները — մնացած բոլոր գյուղատնտեսական մեքենաներ կառավարողները — պետք է լինեն ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի համար ծավալվող մրցման ավանգարդում։

Յեվ դուք, ընկեր անասնաբույծներ, ժամանակն է, որ դուք ևս բարձրաձայն խոսեք մրցման մասին, որպեսզի յերկրամասում անասնաբուծական բրիգադիրների ձայնը ևս լսվի այնպես, ինչպես լսվում է դաշտավարական բրիգադիր Դոլբենկոյի հեղինակավոր ձայնը։ Թող մեզ իրար միացնի ստալինյան բրիգադ կոչվելու իրավունքի

համար մղվող պայքարը, քանի վոր ընկ. Ստալինը միանգամայն պարզ կերպով ցույց է տվել բերքատվության բարձրացման և անասնաբուծության զարգացման ուղին։

Ինչ է հարկավոր այժմ, ստալինյան բրիգադի կոչումը գործով ձեռք բերելու համար։

— Անխնա պայքարել դասակարգային թշնամու մնացորդների դեմ, վորոնք շարունակում են վնասել մեզ, մանավանդ այնտեղ, ուր չկա բոլշեվիկյան զգոնություն...

— Զգնվորեն, բարեխղճորեն վերջացնել այս տարվա բերքավատային բոլոր աշխատանքները։ Իսկույն ավարտել հացահանձնումն այն կոլխոզներում, վորտեղ նա չի ավարտված։ Ցանքսը կատարել ամենաբարձր վորակով։ Առանց այլեվայլության կատարել յեվ գերակատարել աշնանավարի պլանները։ Որինակելի կերպով նախապատրաստել անասունին ձմեռելու համար։ Ցեվ աշնանն ու ձմռանը ամենալարված կերպով սովորել, ամենալարված կերպով աշխատանք կատարել նրա համար, վորպեսզի սպառազինված դիմավորենք 1935 թիվը։

Կյանքը մեզ սովորեցրել է, վոր յուրաքանչյուր կոլխոզային գործի հաջողությունը վճռում է նախապատրաստությունը։ Ստալինյան մեթոդով նախապատրաստվել 1935 թվի բերքի, կոլխոզների վողջ տնտեսության բարգավաճման համար մղվող պայքարին։ Առաջուց նախատեսել բոլոր մանրուքները՝ նախորդ կոլխոզային տնտեսության յուրաքանչյուր բնագավառի համար կարգեր պատրաստել, նախորդ վերանորոգել բոլոր մեքենաները, նախորդ կազմել բոլոր պլանները և, նշանակում է, ինչպես գրել են «250» բրիգադներն ընկ. Ստալինին, սովորել ամեն ինչ ժամանակին կատարել, ամեն ինչ կուլտուրապես կատարել — ահա թե ինչն ենք ամենից ավելի մեզ պակասում, ահա թե ինչու մի աշխատանքը մյուսի վրա յեր բարդվում, ահա թե ինչու մենք խոշոր կորուստներ ենք ունենում։

Մենք խնդրում ենք 1934 թվի նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձի որը, Ռոստովում հրավիրել ստալինյան կոչի բրիգադների լայն հավաք, այն բոլոր բրիգադների, կոլխոզային տնտեսության բոլոր ճյուղերի ներկայացուցիչների, վորոնք վճռել են պայքարել ստալինյան բրիգադ կոչվելու համար։ Նոյեմբերի 7-ին մենք կանցկացնենք առանձին ստուգում, իմանալու համար, թե արդյոք ստալինյան

մեթոդով ենք ավարտել գյուղատնտեսական տարին, արդյոք ստալինյան մեթոդով ենք պատրաստվում 1935 թվին։

Իսկ յերկրորդ մասնայական ստուգումը մենք մտադիր ենք անցկացնել 1935 թվի հունվարին, այսինքն այն որերին, յերբ կգումարվի խորհուրդների համամիութենական համագումարը—մեր յերկրի տերը։

Խնդրում ենք մրցման յերկրային հանձնաժողովին, բոլոր քաղաքաժիններին, բոլոր կոլխոզնիկներին քննել մեր առաջարկությունները, վորոնց միջոցով մենք ձեռք կբերենք միայն մի բան—սոցմրցմամբ ավելի արագ ընդգրկել բոլոր կոլխոզնիկներին, ավելի արագությամբ առաջ տանել բոլոր հետ մնացող բնագավառները, 1935 թվին գործնականապես իրագործել ընկ. Ստալինի լոզունգը բոլշեվիկյան կոլխոզների և ունևորը կյանքի մասին։

ԲՐԻԳԱԴԻՐՆԵՐ՝ Կուրգաս, Եգին, Դիբրովա, Կուզնեցով, Դրեցկիյ, Սեվակ, Կաբասա-Կալյան, Պելիպենկո, Տելեժենկո, Պոգրեբնյակ, Բաբյայ, Ռինգաչենկո, Բադրան, Դովգենկո, Մելեշկո, Միշեվսկիյ, Զավերյուխա, Նաբոչիյ, Բուդուրին, Զեչեռով յեվ ուրիշներ։



## ՄՐՑՄԱՄԲ ԸՆԴԳՐԳԵԼ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՃՅՈՒՂԵՐԸ*)

### ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ,

Մի ամսից հետո մեր մեծ յերկիրը դիմավորում է տասնյոթերորդ հոկտեմբերին։ Պրոլետարական քաղաքը և նոր կոլխոզային գյուղը, գործարանները, հանքերը, շախտերը և նավթաարդյունաբերությունը, սովխոզները ու կոլխոզները կատարում են իրենց հաղթանակների, նվաճումների, իրենց ձրգտումների և համարձակ մտադրությունների տարեգիրը սկսած Կարմիր Հոկտեմբերից, վորի անունով հենց կոչվում է մեր կոլխոզը։ Յեվ Հոկտեմբերյան հեղափոխության նոր տարեդարձին՝ մեր յերկրի ամեն մի

*) Վերին-Դոնյան ռայոնի, Կազանսկայա ՄՏ կայանի «Կրասնիյ Ոկտյաբր» կոլխոզի կոլխոզնիկների նամակը՝ Ազով-Սեվծովյան յերկրամասի բոլոր կոլխոզնիկներին («Մոլոտ» 4 հոկտեմբերի 1934 թ.)։

ազնիվ մարդու սիրտ ուժգին բաբախում է անցած ուղու մասին մտածելիս և մեզանից յուրաքանչյուրն ուզում է պատմել, ուրիշներին մասնակից դարձնել այսորվա աշխատանքի ուրախությունները։

Նայեցեք մեր դաշտին։ Կանաչում են աշնանացան մշակույթների համաչափ ծիլերը։ Հացահատիկի ամենավերջին հասկը հավաքված և կալված է։ Ամբողջ հացահատիկը մենք դեզերից ենք կալսել։ Վորակի տեսուչ Դմիտրիյ Ալեքսեյևիչ Պոդստավկինը կալատեղն այնպես է սարքել, վոր կարծես լավ նկարիչ է նկարել։ Յերկրամասի 250 առաջավոր բրիգադների մրցակցության մեջ մի քանի տարի մասնակցող բրիգադիր Ֆիլիպ Ուկալովիչ Սելիվերստովի կալատեղում գիշեր ու ցերեկ աշխատում եր 42 դյումանոց կալսիչ և 18 ուժանոց նոր նավթային շարժիչ։ Յերեք կոլխոզնիկները հազիվ եյին կարողանում հացահատիկը փոխադրել։ Մի որում մեքենան տալիս եր 200 ցենտներ հացահատիկ։ Առաջին բրիգադի հողամասում գարնանացան ցորենը մի հեկտարին տվեց վոչ պակաս, քան 10 ցենտներ բերք։ Զուր չեր վոր Ֆիլիպ Ուկալովիչը ցանեց «գիրկա» գարնանացորենը,



յերբ հողը նման եր պիսակավոր գամբիկի, յերբ ձյան բծերից խայտաբղետ տեսք ուներ։

Ոգոստոսի 17-ին մենք լիովին կատարեցինք հացահանձնման, մթերավարձի և վարկերի պետական պարտավորությունները, ելևատորին հանձնեցինք 4550 ցենտներ հացահատիկ։ Վորպես կանխավճար, մի աշխորին ստացանք 6 կիլոգրամ։ Լավագույն հարվածային Յեգոր Յեվսեյևիչ Տոպոլսկին, Իվան Ալեքսեյևիչ Աղաֆոնովը և ուրիշները վորպես կանխավճար ստացան 130-ական փութ հացահատիկ։ Նույնիսկ մասնակցությունը կոլխոզուհի Պաշա Աստաշեվանն ևս 45 փութ ստացավ։ Վերջնական հաշիվ փակելիս բոլոր կոլխոզնիկները յերկու անգամ ավելի շատ կստանան, և կոլխոզային առեվտրի համար կառանձնացնենք 2000 ցենտներանոց ֆոնդ։

Գարնանացանի համար տեսակավորել ենք 2325 ցենտներ ցորեն, մթերված է 1200 ցենտներ կեր։ Վաստակած հացահատիկը յերաժշտությամբ ու յերգերով, կոլխոզի ձիերով փոխադրվում է մեր ամբարը։

Մինչև սեպտեմբերի 10-ը մենք լիովին ցանեցինք աշնանացան մշակույթները։ Իսկույն ձեռնարկեցինք աշնանավարին։ Բրի-

գաղներում, յուրաքանչյուր իջևանում գարնան համար խոտ ենք ամբարել։ Դեզերը ցանկապատել ենք, իսկ վերևից ծածկել ենք հարդով կամ ճողերով, որպեսզի ոչ մի բուռ խոտ չթրջվի և չփթի։ Վերանորոգում և մաքրում ենք բրիգադների շտեմարանները, որտեղ ձմռանը փոխադրելու ենք սերմացուները։

Լավ հիմքերի վրա է դրված մեր դաշտավարությունը։ Բայց և անասնապահության ասպարեզում ել ցույց տալու, հպարտանալու որոշ բաներ ունենք։ Մենք նկատում ենք, որ մեր ղեկավարները—կուսակցության ռայկոմի քարտուղար ընկ. Սավուշը, քաղբաժնի պետ ընկ. Սերգեևը և կոլխոզի վարչության նախագահ՝ 25 հազարական հանքագործ ընկ. Շաբունինը յեռանդուն կպել են անասնաբուծության գործին։ Ներկայումս անասնաբուծական ֆերմաներում աշխատում են լավագույն կոլխոզնիկներ։

Լավ կովանոցներում, հորթանոցներում և բազաներում ունենք կաթնա-ապրանքային ֆերմայի 400 գլուխ անասուն։ Այս թվում մեծանում են 120 արջառներ՝ դաշտավարական բրիգադների համար։ Այս տարի բրիգադներին հանձնեցինք 70 գլուխ արջառներ։



Խոզաֆերմայում կա 25 խոզամայր, ազնվացեղ գեր խոզեր, 105 խոճկոր և մատղաշ խոզ։ Ոչխարաբուծական ֆերմայում կա 134 ոչխար, հավաբուծական ֆերմայում—835 հավ։ Կա 230 սագ, 312 բադ և 93 մեղվի փեթակ։ Այս տարի անասնաբուծական ֆերմաները տվել են 412 գլուխ նոր ծնած անասուններ։

Բնական հարստությունները — դոնյան տափաստանների խոտերը, լճերը և ավազանները—մենք ոգտագործում ենք կոլխոզի բարորության համար։

Այս տարի մեր կոլխոզնիկները ապրանքային ֆերմաներից ստացան 38 հորթ, 145 խոճկոր, 48 գառ, 600 հավ։

Մինչև 1934 թ. կոլխոզ մտած կոլխոզնիկների բոլոր տնտեսություններն արդեն բավարարված են կովերով կամ հորթերով։ Մեր անհատական ոգտագործման համար մենք ունենք 128 կթան կով, 109 ստերջ կով և հորթ, 198 խոզ և խոճկոր, 48 գառ, 2000 հավ, սագ և բադ, 23 մեղվի փեթակ։ Այս բոլորը 264 տնտեսությունների համար է։

Մինչև Հոկտեմբերյան տարեդարձը կոլխոզի վարչությունը հորթերով կբավարարի մնացած 27 կովազուրկ տնտեսություններն

ևս։ Բոլորն էլ խոճկոր են ունենալու։ Կովեր և խոզեր ունեցող կոլխոզնիկների հետ արդեն պայմանագիր է կապված 53 հորթ, 55 արջառ և 49 խոճկոր գնելու համար։ Կոլխոզնիկներն արդեն գիտեն, թե ինչպիսի հորթեր և խոճկորներ են ստանալու և նրանց անունները կնքել են արդեն։

Կոլխոզի վարչությունը, վորպես դրամական յեկամուտ, առայժմ մեզ տվել է 1 աշխորի համար 50 կոպեկ, իսկ ստանալու յենք 1 ռուբլի 60-ական կոպեկ։ Աղյուսի գործարանը պատրաստել է 40 հազար աղյուս, իսկ գործարանից ստացված յեկամուտները պլանում չեն մտել։

Վորսացել ենք 2400 ռ. ձուկ և նույնքան էլ կվորսանք ձմեռը։ Իսկ մեզ մոտ գլխավոր յեկամուտը կաթնա-ապրանքային ֆերմայից ստացվող յեկամուտն է։ Անցյալ տարի կաթնա-ապրանքային ֆերման տվեց 56.000 ռ. յեկամուտ, իսկ այս տարի կտա 100.000 ռ.։

Այս տարի մեզանից շատերը թեակոխեցին ունևոր կյանք, վորովհետև մենք վոչ թե վախից, այլ խղճով կատարեցինք հարվածային կոլխոզնիկների առաջին համագումարում ասված ընկ. Ստալինի այն խոսքերը, թե մեզանից «պահանջվում է միայն մի



բան—աշխատել ազնվաբար, կոլխոզային յեկամուտները բաժանել ըստ կատարված աշխատանքի, պահպանել կոլխոզային բարիքը, պահպանել տրակտորներն ու մեքենաները, լավ խնամել ձիուն, կատարել բանվորա-գյուղացիական պետության առաջադրանքները, ամրացնել կոլխոզները և դուրս շպրտել կոլխոզներից այնտեղ սողոսկած կուլակներին և յենթակուլակներին»։ Այս խոսքերը պարունակում են կոլխոզային շինարարության մեծ նշանակություն։

Մի անգամից չե, վոր մեր կոլխոզն ամուր վոտքերի վրա կանգնեց։ Գարնանից առաջ մեզ մոտ առանձնացվեց Սելիվերստովի «250» ական բրիգադը։ Սելիվերստովի բրիգադը հանդիսացավ բարձր բերքատվության բրիգադների ստալինյան կոչի նախամարտիկը։ Քաղաքաժինը բոլոր բրիգադներին զինեց նրա փորձով և մեր «Կրասնիյ Ոկտյաբր» կոլխոզը դարձավ իսկական բոլշևիկյան, առաջատար կոլխոզ։

Այժմ մեզ մոտ իրար հետ մրցում են բոլոր բրիգադները, կոլխոզային արտադրության բոլոր ճյուղերը։

Մեր կոլխոզը գարնանը մրցման հրավիրեց Կազանսկայա ՄՏ կայանի բոլոր կոլ-

խոզներին և ահա արդյունքները։ Մեր Կազանսկայա ՄՏ կայանի բոլոր կոլխոզները մինչև սեպտեմբերի 8 հացահանձնման և մրթերավարձի լոլոր հաշիվները լիովին փակեցին պետության հետ և վերադարձրին վարկերը։ Կազանսկայա ՄՏ կայանի կոլխոզները պետությանը հանձնեցին 66.000 ցենտներ հացահատիկ, այսինքն 396 հազար փութ, վորից յերեք քառորդ մասը ցորեն է։

Դեռ շատ բաների մասին ենք ուզում պատմել, բայց լսում ենք, վոր շատ կոլխոզնիկներ մեզ հարցնում են.

— Մի՞թե մեր «Կրասնիյ Ոկտյաբը» կոլխոզում վոչ մի սխալ, վոչ մի թերություն չկա։

Չենք թագցնի—կան սխալներ, կան թերություններ։ Իրավացի յե ընկ. Շեբոլդաևը, յերբ նա լավագույն բրիգադիրների յերկրային հավաքում նախազգուշացրեց մեզ և ասաց.

«Մենք չենք կարող մոռանալ, վոր թշնամին դեռ կենդանի յե և վոր այս թշնամին իր սև գործը կատարում է վոչ միայն հանձին կուլակային արբանյակների (իսկ սրա որինակները քիչ չեն), այլ վոր մեզ հետ են քաշում հին սովորությունները, հնի ժառանգությունը, «կապիտալիզմի մնացորդները», վորոնք ամենից առաջ հայտնաբերվում են



դեպի աշխատանքը, դեպի կոլխոզային սեփականություն ունեցած մեր վերաբերմունքի մեջ։ Դա—դատարկապորտությունը, անհոգությունը, գողությունն է, վորը դեռ բավականաչափ գոյություն ունի և, վերջապես, այն անտարբեր, սառը վերաբերմունքն է կոլխոզային գործի հանդեպ, վորն ուժասպառ է անում կոլխոզը»։

Ահա, որինակի համար, ինչ կատարվեց 6-րդ բրիգադում։ Տոնին բրիգադիրը գնաց ՄՏ կայան և սեպտեմբերի 2-ին բրիգադ չվերադարձավ, իսկ յերբ սկսեցին ստուգել, թե բրիգադն ինչպես է ցանում, ապա պարզվեց, վոր տնկարանում աղտոտ հաճար է ցանված։ Համեմատության համար գլխավորապես վերցնենք բերքատվությունը։ Մեր «250» բրիգադում հողը մյուսների հետ համեմատած միատեսակ է, իսկ բերքն յերկու անգամ ավելի շատ է, քան մյուս բրիգադներում։ Մյուս բրիգադներում բացակայում է կուլտուրան, կուլտուրա դաշտում, ինչպես նաև կուլտուրա ֆերմայում, կուլտուրա ամբողջ կոլխոզային արտադրության յեվ կենցաղի մեջ։ Այս մասին ուժեղ կերպով շեշտեց ընկ. Շեբոլդաևը առաջավոր բրիգադիրների վերջին հավաքում։

Վորպեսզի ավելի ևս բարձրացնենք կոլխոզային աշխատանքի արտադրողականությունը, ավելի շուտ մոցնենք կուլտուրան վողջ կոլխոզային կյանքում, զարգացնենք վոչ միայն դաշտավարությունը, այլ նաև մեր տնտեսության բոլոր ճյուղերը, վորպեսզի ավելի շուտ վերացնենք կապիտալիզմի բոլոր մնացորդներին, դրա համար մենք վորոշեցինք Հոկտեմբերյան տարեդարձին և խորհուրդների համագումարին դիմավորելու համար մրցման հրավիրել և մեր ուժերը չափել այն կոլխոզների հետ, վորտեղ գրտնվում են հայտնի բրիգադներ։ Գլուժնիկովի (Տիմաշևսկի ռայոնի «Զեկիսս»), Մակեևի (Կրապոտկինի ռայոնի «Միրովոյ ոկտյաբր»), Գորբանևի (Լաբինսկի ռայոնի Շերոլդայեվի անվան կոլխոզ), Դոլբենկոյի (Տիխորեցկի ռայոնի Զերնյավսկու անվան կոլխոզ) և այն մյուս բոլոր կոլխոզների հետ, վորոնք ընդունում են մեր պայմանները։ Մինչև այժմ յերկրամասում իրենց ուժերը չափում եյին սովորաբար առաջատար բրիգադները։ Ժամանակն է, վոր բոլոր լավագույն կոլխոզները չափեն իրենց ուժերը։

Մենք պարտավորվում ենք մինչև հոկտեմբերի 15-ը վերջացնել գյուղատնտեսական բոլոր աշխատանքները և սկսել յեկամուտի մթերային մասի բաշխումն այն հաշվով, վոր մինչև Հոկտեմբերի 17-ը տարեդարձը նա ավարտվի։

Մինչև հոկտեմբերի 15-ը ամբողջ գարնանային դաշտը վարել, վորի համար մեզ մոտ աշխատում են 30 բուկկեր և 60 զույգ լծական։ Բացի դրանից, ՄՏ կայանը մեզ ոգնում է տրակտորներով։

Մինչև նոյեմբերի 1-ը բոլոր պահանջվող կերերը փոխադրելու յենք դեպի անասնաբուծական ապրանքային ֆերմաները, ինչպես նաև փոխադրելու յենք կոլխոզնիկների անհատական անասունների համար պահանջվող կերերը։ Ամեն ինչ պետք է կատարել տնտեսավարի—նախորդ։

Մենք արդեն անցնում ենք հաջորդ տարին աշնանացանը բացառապես տեսակավոր հաճարով կատարելու գործին։ «250» բրիգադը մենք դարձնում ենք փորձնական ցուցադրական դաշտ։ Այս բրիգադը մեզ համար պատրաստելու յե գարնանացան և աշնանացան տեսակավոր սերմացուներ։ 1935 թվին մենք ցանելու յենք 1000 հեկտար տեսակավոր հաճար, 350 հեկտար տեսակավոր գարի, իսկ 180 հեկտար տեսակավոր վարսակ։

Անասունների ցեղը լավացնելու համար սովխոզներից գնում ենք 5 արտադրող շոտտորն, 3 խոյակ և 10 անգլիական տեսակի խոզ, 55 ազնվացեղ վոչխար և խոյ։ Յերկու արտադրող շոտտորն տալու յենք կոլխոզնիկներին՝ իրենց անասունների տեսակները լավացնելու համար։

Կառուցում ենք 200 խոզի համար խոզանոց և 500 վոչխարի համար փարախ։

Ընդարձակում ենք աղյուսի գործարանը, 1935 թվին շինարարության համար կտանք 1 միլիոն աղյուս։

Ատաղձագործական և կոշկակարական արհեստանոցներին կից սարքավորում ենք անիվ պատրաստող արհեստանոց, կառուցում ենք ջրաղաց՝ գանազան ապրանքները աղալու համար։ Զարգացնում ենք ոժանդակ ճյուղեր։ Յանելու յենք 25 հեկտար բանջարանոց, 1934 թվի համեմատությամբ ձկնորսությունը կավելացնենք վոչ պակաս, քան 5 անգամ։ Ուռկանների և ցանցերի համար մենք ունենալու յենք մեր սեփական թելը։ Փորձնական հողամասերն այս տարի կոլխոզին տվին 2.500 փունջ վուշ։

Աշնանը 5 հեկտար տարածության վրա տնկելու յենք այգի և կառուցելու յենք կոլխոզային յերիտասարդության ակումբ 300 մարդու համար։ Ակումբում կազմակերպելու յենք կոլխոզային ինքնագործունեության թատրոն։ Աշխատելով դաշտում, արտադրության մեջ, մենք ուզում ենք գյուղում ունենալ և՛ ակումբ, և՛ թատրոն, և՛ կինո, և՛ ռադիո, և մենք ամեն կերպ կաշխատենք, վորպեսզի բոլշևիկյան կուլտուրան անհետ կերպով սրբի մեր գյուղի վրայից «Պոպովկի» անունը։

Մտնելով նախահոկտեմբերյան մրցման մեջ, մենք մեր ամբողջ ուժերը կտանք, վորպեսզի մինչև վերջն արմատախիլ արվեն կուլակային ազդեցության մնացորդները։ Մենք կամրացնենք այս տարվա հաջողությունները, մեր կոլխոզի համար կնվաճենք բոլշևիկյան, ունեվոր կոլխոզի մեծ փառք։

Կոլխոզնիկների ընդհանուր ժողովի հանձնարարությամբ՝

**ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ц1676

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUП-Армянской ССР
им. А. Мясниковяна
Ս. ԱՍՈՒՐԻՆՅԱՆ ՍԵՂՄ

Отв. по выпуску Г. А. Потенц. Тех. ред. В. Подчасов

Сдано в набор 13/X-1934 г. Подписано в печать 19/X 1934 г
Издание 545/4123 Об'ем 1, 25 печ. листа
Статформат А6 105x148 Заказ 5299
Уполкрайлит Б—6575 Тираж 1500 экз.

Типография им. „Стачки 1902 года" АЧПТ в г. Ростове на Дону

Туркменская государственная библиотека

«Ազգային գրադարան»
NL0189313

Ц1610

С35
С97

ԳԻՆԸ 20 կոп.
Цена 20 коп.

На армянском языке

# СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СОРЕВНОВАНИЕ НА ВЫСШУЮ СТУПЕНЬ

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

ԵՐԻՎԱՆ.ՀՍՍՌ.

ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ ՄՈՍԿՈՎՍԿԱՅԱ ՓՈՂ. № 53

ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)